

ԱԿԱԳՆԵՐՈՒ ԽՈՒՄԲԻ 1985Ի ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տարի մը եւս բոլորեցինք: Փառք կու տանք Աստուծոյ իր պարգևներուն համար:

Բացի ժմրան խիստ ցուրտ եղանակն մեր խումբը ամսական հանդիպումներ ունեցաւ ամէն ամիս, երբ մեզ մեր տուներէն առնելով տարին Եկեղեցի, ուր ունեցանք հաճելի ժամանց, դաստիարակիչ յայտագիրներ, աղօթք եւ սիրալիր ընկերակցութիւն:

Աւուր պատշաճի խորհրդած ուղիւններ եւ շահեկան գիտելիքներ տրուեցան մեզի Տէր Հօր Կողմէ, ինչ որ բոլորս ալ գնահատանքով մտիկ ըրինք եւ օգտուեցանք:

Ամէն հաւաքոյթի առիթով ամէն անդամ մէկ տոլար կամ աւելի վճարելով եւ երբեմն ալ ուրիշ դրամական նուէրներ ընելով մեր գանձը պարարտացած է բաւական: Մեր խումբի կազմուելէն ի վեր այս լումաներով գոյացած մեր գանձին մէջ ունինք ներկայիս աւելի քան 2,000 տոլար, որ կը ծրագրենք նուիրել նոր Եկեղեցիին, մեր խումբին անունով յիշատակի նուէր մը ունենալու նպատակաւ եւ մեր համեստ մասնակցութիւնը բերելու մեր նոր աղօթատունի հաստատման մէջ:

Մեր շնորհակալութիւնը կը յայտնենք մեր Հովհիւն, ինչպէս նաեւ այն ազնիւ տիկիններուն, որոնք մեզի կ'օգնեն հիւրասիրութեամբ, փոխադրութեամբ եւ բարի տրամադրութեամբ. Անահիտ Զուհաջեան, Օժիկ Թումա եւ Նոյեմ Փոլատեան:

Աղաւնի Սահակեան
Առենապէտուհի

Մինա Մանուկեան
Գանձապահուհի

Արքուհի Թորոսեան
Ասենադսլուհի

AVAKS — SENIORS

Since the inception of our group, we have had the good fortune of meeting monthly at the Church, except in inclement weather. At our gatherings we have shared bread and good fellowship, plus educational programs and prayers, led by our Pastor.

At each gathering a contribution of one dollar, or more, is made by each member. From the collection of those monies and from sponsoring a few Lenten dinners, we have now in our Treasury close to \$2,000. We plan to donate this sum to our new church, where we hope to have a memorial in the name of our group.

We thank Der Hayr, and the ladies who have helped us as our hostesses and who have given us rides - Anahid Chookachian, Ojig Tooma and Noem Poulatian.